



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

U-67

Ապուխուտուհայ

Երանի Հայկուհի

6116

1879

2003

2011

ԵՐԱՆ  
ՀԱՅԿԱԶՆ

ԱՐԱՐԻ  
ԳԱԶԱՅՆ ՀԱՐԻԱՅ

ԳՐԵԱՑ

ԵՍԱՑԻՎՂԵՒՈՆԳԵՆԱՆ ԱՊՍՀՈՒՆԵԱՑ

Մխարան Ա. Կարապ. տխախն Տարօնոյ



ՏՊԱԳՐ. Ը. Կ. ԽՍՐԸԵԱՆ

—  
1879 =

891.542-94

4-67

116  
W-67  
պ.  
**ԵՐԱՆ ՀԱՅԿԱԶՆ**

**Ա Ր Ա Ր Ք**

**Ք Ա Ջ Ա Յ Ն Հ Ա Ր Ք Ա Յ**

**Գ Ր Ե Ա Յ**

**ԵՍՍՅԻ Կ. ՂԵԻՌՆԳԵԱՆ ԱՊԱՀՈՒՆԵԱՅ**

*Մխարան Սուրբ Կարապետի ոխտիկն Տարօկոյ*

324  
399



*Յ. Գրիգոր*

**ՏՊԱԳՐ. Մ. Կ. ՍՍՐԸԵԱՆ**

—  
**= 1879 =**

Արժ. Տ. Կարապետ Վ. Եսայեան  
սուրբ եղբայր ,

Բազմիցս թախանձանօք խնդրելի  
յինէն 'ի գիր հարկանել զարարս քաջու-  
թեան վեհ նախնւոյն մերոյ հայկազն  
Երանայ , ահա՛ կատարեցի զնոյն 'ի պը-  
սակ բաղձանացդ 'ի լոյս հանեալ զհայ-  
կազն Երան :

ՀԵՂԻՆԱԿՆ

## Ա. Զ Դ

Որոց կամք եղեն զհայրենեացն խօսիլ  
միտք նոցին ախորժեցին զբաջ արարս նախըն-  
եացն 'ի մէջ բերել , զի զոգին արիութեան  
հարցն վառեսցեն 'ի սիրտ որդւոցն հարազատից :

Արդ վառս անձին համարիմ և ես աստ 'ի  
գիր հանել զգործս քաջութեան իմն վեհ հարցն  
յորոց ազատ արենէ ծնայ և 'ի բաժին ժառան-  
գութեան նոցին սնայ :

Բերանք բնակչացն Հարքայ հանապազ  
զհամբաւ քաջացս քարոզեն , որոց շիրմաց համ-  
բոյր տան բոյլք աստեղաց 'ի ջինջ երկնից Հայոց :

Թէպէտ անցին դարք յոլովք և 'ի հեղեղս  
արեան թաղեցին 'ի հող զգործս քաջացն Հար-  
քայ , այլ ոչ զօրեցին դուռն դնել բերանոյ հայ  
գովչացն , յորոց զոր ինչ ստոյգն լուայ զայն 'ի  
գիր հարի :

Ապաքէն և տեղիքն վկայք են առ սոքօք  
եղեալ անցիցն անցելոց :

ՀԵՂԻՆԱԿՆ

Արդարոյն Աստուծոյ պահի  
փոփոխել զվիճակ ազգաց:

Ապերախտ ազգ մարդկան հետ  
տեալ յարդա՛ր կամացն Աստուծոյ յող-  
դողդ բնութեամբ ՚ի հաճոյս ամբարըշ-  
տութեան բերէին գործել զանդէպս  
բարուց բանականաց: Սրժանապէս հա-  
սանէր այնց պաշտօնէից չարին յապա՛-  
ժամանակի ահեղ դատաստան բարկու-  
թեան արարչին տիեզերաց: Գազան ա-  
մեհի ելանէր անդէն ՚ի ծովէ աշխարհի  
խռովել զխարդախ խաղաղութիւն որդ-  
ւոցն աշխարհիս. որքան սուրն ահեղ ՚ի  
ճապաղիս արեան բանայր զճանապարհ.  
առաւել ևս հոգւով գայթակղութեան  
նա զօրանայր հեղեղաւ մեղաց ապակա-  
նել զաշխարհ: Աշխարհ ՚ի խաւարի կայր,  
արեգակն զդալի աշխարհիս խնամով հը-  
րապաշտ արքային Պարսից Յազկերտի  
որդւոյ Խոսրովու ՚ի խորս անգիտութեան

---

Առեալ ՚ի ստոյգ ականդութեանց անտի հայրենեաց  
փոխեցի յոճ գրաբառ նուիրել ազգես Հայկադանց:

---

Թաղէր իսպառ զպաշտօն ճշմարտին Աստուծոյ և արեղական արդարութեան : Հագար ժառանգն օրհնութեան և միանգամայն բորբոք բարկութեան բարձրելոյն հրդեհեալ յապառաժէն Արարիոյ արձակէր յարևելս , և առժամայն բռնացեալ բոցով սրամտութեան կործանէր զգահ և զգոռոզ իշխանութիւն Յազկերտի ամբարիշտ արքային Պարսից :

ԳԼ. Բ.

Հարուածք փորձանաց դառնան անդրէն 'ի զլուխ անզգամաց . հարըստութիւն Յոնեայ՝ որ 'ի կեղծ կեանս կախարդէր զոգիս պարզամիտ ազգաց դարուն այնորիկ համարել զինքն հայր հանճարոյ գլխովին թաղեալ 'ի պղերդ բարս հեշտութեան, հնարէր զճոխութիւն իւր հաւասարել փառաց արեղական . հանապազ գրգռէր դաւանօք զՀայս 'ի պատերազմ հանդեպ հօր թշնամեաց , և յօգնութիւն նոցին ոչ կանխէր 'ի վը-

տանգս . զյաղթութիւն Հայկազանց տայր բուռն զօրութեան ինքեան . իսկ զպարտութիւն Հայոց անխոհեմութեան նոցին զրէր արդիւնս , և հաղորդէր թշնամեացն նոցա բաժանել յինքեանս զփառս Հայկազանց : Պատրանօք սիրոյ գերեաց զՀայս 'ի գերեղման գայթակղութեան կենաց , և կախարդ կենօք քաղաքականութեանն կործանեցաւ անդէն և ինքն 'ի դատապարտութեան գեհեան : Ահա՛ զայս կերպարան կրեն այսօր և խարդախ որդիք արդի աշխարհիս . որք 'ի դիմաց են հայելի և 'ի թիկանց ամբի :

ԳԼ. Գ.

Աշխարհին փոփոխէր իսկոյն յողդողդ վիճակ . Ամար իշխանն Հագարաց զկադսէայն վարեալ զպատերազմն հռչակեալ ոսպան զգոռոզ արքայն Յազկերտ և իշխեաց համայն հարստութեան Պարսից , ապա դարձ արարեալ յարևել-

լից բուռն զօրութեամբ հարաւ ընդ  
 Հայաստան . զօրք նորին ասպատակ  
 սփռեալ 'ի դաւառս Հայկազանց կողման  
 Պարսկց հրդեհէին զամենայն տեղիս զո-  
 թովք անցանէին . և գերեալ ոգիս ութ  
 հազար արանց և կանանց վարեցին տաղ-  
 նապաւ յաշխարհ Ասորւոց : Անպարտելին  
 Ամար վատահ 'ի զօրութիւն անձին գունդ-  
 մի զօրք խաղայր անդէն 'ի խորս աշ-  
 խարհին Հայոց : Հայկազն Երան իշխանն  
 Հարքայ ազատ սպայիւքն իւրովք զգի-  
 շերայն 'ի դիմի հարեալ Ամարայ երկ-  
 սայրի գեղարդեամբն կարելէր խոցեաց  
 զնա . և 'ի սուր սուսերի եհան զամե-  
 նայն զօրս նորս : Անդ ուրեմն տարադէպ  
 վարեալ երբեմն Ամարայ յամայնս լե-  
 բանց կորդւաց դէպ լինէր նմա անդրէն  
 անկանիլ յաշխարհն Ասորւոց :

ԳԼ . Գ .

Ամբոխի վիճակն մարդկան բարձ-  
 մամբ իրաւանց արդարութեան : Ապե-

րախտ նախարարք տանս թորդոմայ 'ի  
 նախանձ ասելութեան միմեանց վառ-  
 եալ զայն ժամանակ քակէին իսպառ  
 զկապ միաբանութեան աղգիս , անձն  
 իւր իշխան բաժանեալ հոգայր միայն  
 զգերդաստան իւր և զգաւառ . և ևս  
 բաղումք 'ի նոցանէ բազմիցս անցեալ 'ի  
 կողմն թշնամեաց խռովէին անխնայ  
 զաշխարհս Հայկազանց : Հիազօրն Ամար  
 պարտեալ 'ի Հայկազն Երանայ խոր 'ի  
 սիրտ խոցեալ դառնայր յաշխարհն  
 Ասորւոց . այլ 'ի վեր չհանէր զբան պա-  
 տեհ ժամանակի պահեալ թափել զվը-  
 րէժն ամբարշտութեան 'ի Հայս :

Գերին Հայկազանց 'ի հալածանս  
 հեծէր Հադարաց յաշխարհին Ասորւոց  
 և բողոք արկեալ առ ազատազն իշխանս  
 Հայոց 'ի ձեռն պատգամաց զփրկութիւն  
 խնդրէր 'ի գերութենէ տառապանաց :  
 Արդեօք ո՞ տայր ինձ կեանս զայն ժա-  
 մանակ արտասուել զազգն իմ սիրական :

ԳԼ. Ե.

ԲԱՂՁԱՆՔ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ  
ԲԱՌՆԱՆ ԶՆԱԽՍՏԻՆՍ ԳԵՐՈՒԹԵԱՆ

Աշխարհս Հայոց տապակէր 'ի տագնապ Հագարաց, սպառնալիք այլազգեացն հայէին զսիրտս Հայոց, որք առաղետիցն դիմէին 'ի Հարք. ամբոյն Լիզայ առ Վարդ գետով աղատ առնէր զՀայս յերեսաց հալածչացն:

Հայկազն Երան զայն ժամանակ ունէր զամբոյն Լիզայ, որոյ արիււթեան համբաւ քաղէր զոգիս Արարաց և Հագարաց:

Հայք հանապաղ ժողովէին 'ի դիւան Երանայ, խօսէին յաճախ զքաջացն Հայկազանց և 'ի նոյն յողի վառէին զօրեարս աշխարհին. հրոսակք Հագարաց աստանդեալ խռովէին զգաւառս Հայոց: Երան երբեմն մտեալ 'ի ժողովանդ աղատացն յոտն եկաց ամբոխն ամենայն, Երան 'ի վեհ դէմն անցեալ բաղմէր 'ի գլուխ ակմբին, որոյ ահեղ

այիքն յաւելուին զչուք ասենին, Հանդէպ երեսայն Երանայ կայր որդի նորին Աղատ, աջոյն ունէր զբունն սրոյն և 'ի թիկանց նորա լուռ կային արիք Հայոց:

Ամենեքին 'ի բերան Երանայ հայէին թէ զի՞նչ բանք են նորա առ նոսա:

ԳԼ. Զ.

Ամենայն ժամանակ կարգեալ է 'ի հանդէս աշխարհի հանել զիւր հարազատ ժառանգ: Երան ասէ «Աղատք իմանայք արդեօք զի ահա՛ թնամին հասեալ կայ 'ի սահմանս Հայոց, և խորհի անակնկալ ունել զդղեակս, յոր ապահով կացին ցարդ կեանք մեր և աղատութիւն: Արդ եթէ դէպք տացեն Ոսոխին հանել 'ի ձեռաց մերոց զամուրս ապաստանի, յետ նորա թէ զի՞նչ աղէտք 'ի գլուխ մեր տեղալ սկսանին դիտէք:» Աղատքն ասեն — Երան խիտ է զդէմ ունիլ դիպաց, այլ ոչ է պարս

'ի թեթև դէպս իսպառ խռովիլ . տեղսցին տաղնապը արկածից կուրծք մեր բայ են տանել ամենայն հարուածոց . դիտեա՛ զի երգուաք մեք 'ի խնամս քո արեամբ պահել զազատութիւն մեր . առ այս չեմք անփոյթ . այլ արդքերդ մնայ խորհել զի կամք մեր զմտաց քոց կախին . և մեզ փառք են 'ի հրաման քո հոլովիլ թէ 'ի մահ և թէ 'ի կեանս . ապաքէն ասա՛ զի՛նչ են կամք քո :

ԳԼ Է .

Արկածք դիպաց փոփոխեն զփիճակ կենաց . Երան 'ի խորս ծփայր խորհրդոց ունելով բռամբ զգլուխն իւր . ատեանն սպասէր քաղել բան 'ի բերանոյ՝ նորա . և այր յանձին խոկայր խռովեալ : Երան ասէ , — Սղատք միտք Աստուծոյ միայն անլրէպ են . և կամք նորին անեղծ . գէթ ահեղ ևս իցեն աղէտքն քան զոր մեք դատիմք . այլ ո՛չ վայելէ արանց արեաց զերեսս 'ի մի կողմն ունել . քան-

զի վհատելոյն յաճախեն և վտանդքն :

Ապաքէն ուխտեմ և ես յանձին զնել զկեանս իմ 'ի վերայ ազատութեան ազգիս , թուի ինձ թէ՛ մահ կեանք են ազատ մեռելոյ : Արդ և ձեզ մնայ չը վհատիլ 'ի վտանգս . արիացէ՛ք և դուք 'ի պատերազմի ամփոփել զզօրութիւն բազկի ձերոյ յաղեղն և 'ի սուսեր բռնալ զանարգանս յանձանց : Միաբան փութասոյո՛ւք բռնութեամբ վանել ըզբռնութիւն . կեցցո՛ւք 'ի փառս Աստուծոյ , և մեռցո՛ւք 'ի փառս հայրենեաց :

ԳԼ Ը .

Գահակալն դայթակղութեան անդրէն սպառնայր զպատերազմն անողոգ , համբաւ ահեղ զօրութեան նորին աղմըկէր զհամայն ազգ և ազինս արևելեան աշխարհայ : Ամար զփորձ առեալ զառաջին յաղթական քաջութեան հայկազանց սողաց յաշխարհ Ասորւոց . ապա յետ ժամանակաց ինչ ժողովեալ զօրս

յիսուն հաղար արանց տայ 'ի ձեռս զօրալարացն իւրոց Օթմայ Ոգբայ և Բարհայ դիմել յարևելս. գերել զաշխարհքն հայկազանց, 'ի հուր դատել զհարք, և զհայկազն Երան երկաթի կապանօք վարել 'ի Խառան: Արդ Օթման Ոգբայ և Բարհ ելեալ յաշխարհէն Ասորոց յերիս առաջս բաժանեցին զգօրսն ամենայն, և հարեալ ընդ սար և ձոր խաղացին յաշխարհս հայկազանց, Ոգբայ յարևելից, Օթման 'ի հարաւոյ և Բարհ հիւսիսոյ:

ԳԼ. Թ.

Աշխարհս հայկազանց յանցեալ դարըս հանդիսանայր ասպարէզ իմն անեղ պատերազմաց. ամենայն ազինք վեհ փառաց նորին բաղձային և յանպարտելի զօրութենէ նորին սոսկային: Արդեօք զայն ժամանակս յինքնակալ իշխանաց աշխարհիս ո՞ խաղաղ կեանս կնքեաց, և ոչ հարաւ ընդ հայաստան

զփորձ առեալ անեղ զօրութեան նորին. երանի՛ թէ յամենայն դարս արի Երան ոք ելանէր 'ի հայս... Աւա՛ղ զի ապերախտ իշխանք հայկազանց ժամանակին զչահ անձանց առաւել սիրեցին քան զանդորրութիւն կենացն հասարակաց. և ևս ներհակ միմեանց զինեալ ոգւով ատելութեան զազատութիւն հայրենեացն անդէն 'ի վաճառ հանին. գլխովին տապալեալ զբարօրութիւն կենաց աղքիս խոնարհեցան բառնալ զլուծ գերութեան օտար և անողորմ ազգաց, որով զարդիս յարտասուս հարեալ ուրբան զվիճակն անցեալ ժամանակաց:

Արդ այն ինչ Երան խոկայր զազատ կենացն հայկազանց հասեալ անդէն հայ զինուոր գուժեաց Երանայ զգերանս մարդաղեաց և աւարտեալ զխօսս անբաւարտասուեաց:

ԳԼ. Ժ.

Արկածք գերութեան մարդաղեաց իսպառ խռովեցին զխաղաղութիւն կե-

նաց հայկազանց, արին Երան հրամայեաց առ Ժամայն համայն զօրացն հայոց խմբիլ յարձակ ասպարիզի ամրոցին Լիզայ, և ինքն վառեալ զինուք անցեալ ընդ զօրան ել եկաց ՚ի կատար աշտարակի ակատանին և սկսաւ խօսիլ այսպէս : « Ապաքէն ազատ է յամենայնի անեղ էն Աստուած, և յազատ վիճակի ՚ի բնէ զմեզ սահմանեաց, ազատ կենօք ցարդ ասրեցաք յաշխարհի, և ազատ ողբով պաշտեցաք զԱստուածն մեր հայրենի : Արդ կենդանի հաւատովք պատերազմիմք ընդ իշխանս իշխանին աշխարհիս այսորիկ, և ահա զօրադուրս մերս ճշմարիտ հաւատոյն Յիսուս որդին Աստուծոյ յերկնից հայի ՚ի հանդէս նահատակութեան մերոյ. վութաոցո՛ւք պարզ երեսօք երանել առաջի նորա, որոյ անմահ արեամբն կոչեցաք յազատութիւն կենաց : Ապա մեռցուք ՚ի սէր անմահն ազատութեան, և մի՛ ժառանգեացուք անէծս նախատանաց յապագայն :

Այսպանք են Հայկազանց սուկալ յերեսաց Հադարաց, Փափկութիւն կենաց սպառէ զոյժ արի արանց ապաքէն ՚ի զէն ՚ի զէն :

ԳԼ. ԺԱ.

Անձինք արի արանց ազաա չեն ՚ի խռովանաց, արին Երան յաւարտ խօսիցն իջեալ յաշտարակէ անտի զամենայն զօրան յերես բանակս բաժանեաց :

324

Արդ զբանակն առաջին և երկրորդ յանձն արար Պապա իշխանին Գանձուց և Արտէնայ իշխանին Ակոնաց հսկել զամրոցն Հորքայ. այլ զբանակն երրորդ կարգեաց ինքեան դիմել ՚ի դաւառն մարդաղեաց հանդերձ Առանա իշխանին Ապահունեաց : Անդանօր արին Երան կալեալ զձեռս իշխանայն Պապայ և Արտէնայ առաջի համայն զօրացն առէ : — « Ազատք Հայոց պսակ արի արանց է ազատութիւն հայրենեաց. ապաքէն եզերուք որդիք զօրութեանց :

հսկեցէ՛ք բերդիս , արթուն կացէ՛ք չը-  
հել զաղատութիւնն ձեր . անարդանք են  
արեաց զփառս հայրենեաց մատնել  
թշնամեաց : » Ապա գիրկս արկեալ Ա-  
զատայ համբոյր քաղցր կնքեաց 'ի ճա-  
կատ նորին և ասէ — « պատանի հրեղէն  
խնամօքն Աստուծոյ զօրացի՛ր 'ի զէն . . . »  
և հեծեալ անդէն յերկալարն վարեցին  
զուղին , և անցեալ զեփրատ արագ ա-  
րագ հարին ընդ հիւսիս :

ԳԼ ԺԲ

Աղէտք զրկանաց խռովեն զվիճակ  
անմեղ կենաց . բանակն Հագարաց ութ  
հազար զօրօք դարանէր 'ի հեղեղատն  
Հսկայից , որոց զօրավարէր հսկայն  
բարհ , որ հրով հրգեհեաց զգաւառն  
մարդաղեաց : Արեգակն հպէր 'ի համ-  
բոյր բնութեան , և շաղն այգուն փող-  
փողէր 'ի ծղօնս դալարի խոտոց , հնչէր  
հողմն ինչ սուր 'ի բերանոյ ձեանց ձմա-  
յից , և հովիտք լերին բխր Ակնեան  
ծփոյին ծաղկամբք :

Ահա՛ հզօր հայք որպէս յորձանս  
հեղեղաց արձակեալ 'ի հեղեղատն Հըու-  
կայից կարգեցան կային անդէն հան-  
դէպ զօրացն Հագարաց :

Արին Երան անցեալ 'ի ճակատ Հայ  
զօրացն ասէ — « հօրամոյն հայկազունք  
ահա՛ հրէշտակք Աստուծոյ 'ի հանդէս  
հաւատոցդ հային . հաւատովք արդա-  
րութիւն զօրանայ , ապաքէն հաւատովք  
զինեսցո՛ւք , հանդէպ անհաւատութեան  
'ի զէն 'ի զէն :

ԳԼ ԺԳ

Ապիրատն անկանի յորոգայթ փոր-  
ձանաց . Բարհ կուռ կարդեալ անդէն  
զճակատ զօրացն Հագարաց խաղայր  
յարձակ ասպարիղի որպէս դազան ա-  
մեհի և դոչէր — հասէ՛ք հարէ՛ք ա-  
հա՛ զրդանք Հուրեաց դանձեալ են քա-  
ջայ : Պատերազմն քաջութեամբ սկսա-  
նէր , և հոսանք արեան արձակեալ ընդ  
համայն հեղեղատն ճաղաղէին :

Անդանօր բաժանէին 'ի միմեանց  
բանակքն երկօքին . Երան և Բարճ հան-  
դէպ միմեանց ելանէին : Բարճ դիմեալ  
'ի վերայ Երանայ բուռն զօրութեամբ  
ձգեաց զսուսերն զգլխով նորա . Երան  
սղփնէայ ասպարաւն երարձ իսկոյն ըզ  
հարուած սրոյն , և վարսեալ ուժգին  
զտէգն խարդին 'ի սիրան Բարճայ ասէ  
— « Ա՛ռ ահա՛ զբաժին բաժակիր . » Սը-  
լաբ տիգին թզաւ չափ արտաքս ել 'ի  
թիկանցն Բարճայ , և դիակն նորին դը-  
ղըրդմամբ տապալեցաւ անդէն 'ի դե-  
տին : Արին Երան լերդիւք հանդերձ  
արտաքս խլեաց զտէգն 'ի սրտէն Բար-  
ճայ , և ամբարձեալ 'ի վեր ձայն արկ  
արծուաց « — զի՛ զի՛ եկա՛յք տարէ՛ք  
ձեզ ճաշ արդար , զոր բաշխեն ձեզ  
այսօր ձեռք Երանայ : » Անդ խրախուս-  
եալ զօրացն Հայկազանց 'ի սուր սու-  
սերի հարին անխնայ զՀաղարացիս մինչ  
'ի մուտ արեգական , ապա հնչեցին փողք  
յաղթութեան զգիշերայն դառնալ 'ի  
Հարք . և Երանայ կալեալ զերիս զօրա-

վարս Հաղարաց զՍալէճ և զՌաշխտ և  
զՂասխիթ վարեաց զնոսա անտի 'ի պա-  
րեին Պայեկաց :

ԳԼ. ԺԴ.

Պարեխն Պայեկաց 'ի վեր ամբառնայ  
զգլուխն իւր 'ի գիրկ Ոսկի լերին , կողք  
նորին զինեալ են 'ի ժայռից գայլախազ  
քարանց , յորոց հոսեն ջուր առատ և  
պարզ իբր զցօղ արտասուաց : Պարե-  
խան 'ի դոգն գգուէր անտառ իմն գե-  
ղեցիկ ոսկիտերե տնկոց՝ որ 'ի ձայն դեղ-  
ձան թռչնոց հրաշանայ յեղանակ գար-  
նան իբր զանմահ հողուոցն զկայարան :

Արին Երան հասեալ 'ի կատար անդ  
Պարեխան մերկեաց զսուսերն 'ի պատե-  
նէ հանել զվրէժս յամբարշտացն : Ան-  
կան կապեալքն անդէն 'ի վերայ երեսաց  
և զաղաղակն բարձին զփրկութեան :  
— « Գթութի՛ւն , զթութի՛ւն . Երա՛ն ըզ  
կեանս մեր Աստուծոյ խնայեա՛ » . Արեն  
գթութեան ճառագայթեաց անդէն յե-

րեսս Հայ դիւցազնն : Առիւծն վեհ կապեցաւ յաղերս կացելոցն , անդ կառեաւ եկաց Երան 'ի վեր ամբարց զսուսերն մերկ և ասէ , — « Աստուած արդար ահա՛ քոյդ ամպարտելի զօրութեան թողում դատել զամբարիշտս . հողին իմ հարկանէ գիս » . և հայեցեալ յերեսս կապելոցն ասէ — « Ազատ էք ա՛րք երթա՛յք տուք փառս փրկողին Աստուծոյ , զոր այժմ առ անի պաշտել սկսայք : »

Գ. 1. ԺԵ.

Անդ 'ի կատար պարեխան խմբեցան զօրք Հայկազանց , օհսեալ զարիութիւն Երանայ արասաւք սիրոյ և ինդութեան զեզան յաջաց նոցա :

Առաքինին Առան գիրկս արկեալ Երանայ համբուրեաց զսիրտ նորա և ասէ — « Ո՛վ Երան որքա՞ն վեհ իցէ հողին քո և անձն , որ վաղ դթայն յաղերս թշնամեաց : » Ապա և Երան համբոյր սուրբ կնքեալ 'ի ճակասն Առա-

նայ ասէ — « Առիւծդ Ապահունեաց ապարէն հողին քս զոր հեշտութիւն ըզգաց յայս գործ դիւցազանց , որով արդ գլխովին անմահանաս : Արդ դթալ արժան է այնց , որք զԱստուած միջնորդ առնեն աղերսել զկեանս : Պարտիք մարդկան էին սիրով կալ 'ի վիճակի անմեղութեան , այլ աւա՛ղ զի յորժամ միտք նոցին անպականեցան չարեօք , անցին զպայման կենաց , կեանք նոցին կապեցան 'ի դայթակղութեան , որոց ոգիք հանապաղ խռովին տաղնապաւ մեղաց : Երեսք արդարոյն արևեն զողւոյն անդորութիւն . արդ հայեա՛ց և տե՛ս թէ՛ զիարդ ամօթն մեղաց աւասիկ ունի ըզդէմս ամբարշտացդ :

Գիտասջիր թէ՛ ոչ է պայման արդար արեամբ ողորել զաշխարհ , այլ վարեցողք դնալ աստի տապ արևոյն սողորէ զմեզ :

Գ. 1. ԺԶ.

Անցանն աւուրք այլ ոչ պատահ-

մանք . Երան , Առան և Դատ անցեալ  
 զԵփրատ 'ի Թափ վարեցին 'ի դարանդ-  
 Քարեղ լերին , հեռուեցան նոցա և զօրք  
 Հայկազանց . արին Երան արգել անդ  
 զԵլուի գոռողին հայել 'ի Հարք . հա-  
 մայն լերինք Հարքայ պար առեալ պրճ-  
 նէին 'ի զարդ բնութեան գեղովք ծաղ-  
 կանց : Արեգին ճաճանչ պսակ ոսկի կա-  
 պէր զգլխով Սուր լերին 'ի փաղփին  
 փառացն Նազիկայ : Ամպակ լեառն համ-  
 բոյր հայեցիւք յարեմտից հրաշանայր  
 'ի վայրս վայելչութեան , Փափկութեամբ  
 մօրեաց սիրանային լերինք Արեաց 'ի  
 հարաւոյ : Հիւսիսոյ 'ի կողմանց 'ի խոր  
 խոխոմս ժայռից լերին Ոսկեկայ խոխո-  
 չէր արծաթի ալեօք գեան Եփրատ .  
 դեառակն վարդ զմիջովք Հարքայ կամա-  
 ըէր նման չափիղայ : Այլ 'ի գիրկն դա-  
 բամբուխից Հարքայ 'ի վեր ամբառնայր  
 զգլուի իւր ամրոցն Լիզայ . որ զայն  
 ժամանակ 'ի մրրիկ փոշելից արկեալ էր  
 զքօղն տրամութեան : Աչք Երանայ ար-  
 տասուօք լցան տեսեալ զամրոցն Հար-

քայ յայն ախուր կերպարան . տրին Ե-  
 րան խուսկեալ ոգւով դոշեաց — « Ստա-  
 ուած արդար հայեաց 'ի Հարք . հայ-  
 կազունք հասանիլ փութացո՞ւք , ահա՛  
 հա՛ ամրոցն Հարքայ 'ի տազնապի կայ »  
 և միաբան սրացան անտի իբրև զարժ-  
 ուի :

ԳԼ ԺԷ

Անադորոյն գաղան զղիշերային  
 խնդրէ զմթութիւն , արդ յելանէն Ե-  
 րանայ հանդէպ հրոսակացն Բարհայ  
 յետ հինգ աւուրց Օթման երեսուն հա-  
 զար զօրօք Հազարաց 'ի հարաւոյ ար-  
 ձակեցաւ 'ի Հարք , և յանկարծ դիմեալ  
 ընդ այգն կանխեցին կալան զարձակ  
 դաշան ճօճակաց , զոր տեսեալ բնակ-  
 չացն Հարքայ փութացուցին հանին ըզ  
 կանայս և զմանկտիս յանառիկ ամրոցն  
 Լիզայ և լնքեանք 'ի զէն վառեալ երեք  
 հազար վեց հարիւր առաքինի արամբք  
 երին հանդէպ Օթմանայ :

Պապ իշխանն Գանձայ եկաց կա-  
ռավար արեղնածիղ զօրացն. իշխանն Ա-  
կոնայ Արաէն կարգեցաւ պետ պարսա-  
ւորաց : Այլ արին Ազատ որդին Երա-  
նայ էանց 'ի գլուխ դնդին հեծեալ ըս-  
պայիցն :

Համոյն դաշոն եռայր բազմու-  
թեամբ զօրացն Հագարաց , բլուրք և  
դարձք դարիցն փողփողէին 'ի փայլ սուր  
սուսերաց և 'ի շողինն աշտէից դալար  
նիզակաց :

ԳԼ. ԺԸ.

Արեգակն եհար 'ի պարիսպ բերդին  
և Օթման հրամայեաց հնչել զփող պա-  
տերազմին . խաղացին յասպարէզ Հա-  
գարք . դիմեցին 'ի վերայ ամբոխիւ Հայք-  
հարան 'ի միմեանս երկոքին կողմանք և  
բազումք յարի արանց դի տառաստ ան-  
կան 'ի գետին . հեղգանային Հագարք .  
հանդիսանային Հայք , Օթման նիզակ  
արի 'ի ձեռին խաղաց յարձակ ասպա-

րիղի անդ և ասէ — « Ազատ էիք յա-  
մենայնի Հայք , զհարկ աշխարհիդ ըն-  
դէ՞ր խափանէք , կամիք զՏիմն ամրոցիդ  
յարև հանել , Քաջն Պապ ասէ — « Հայք  
ազատ են յամենայնի Օթման . ապաբէն  
զիա՞րդ հրամայես հարկել անխափան :  
Արդ քաջ գիտեա՛ Օթման թէ՛ Ազատք  
ս'չ երբէք հարկս տան , սպառնաս յա-  
րև հանել զՏիմն ամրոցիս հա՛ . . .  
զդո՞յլ չթաղել զարև քո 'ի փոյլ նորա .  
հզօ՞ր են հայք , 'ի փո՞րձ 'ի վորձ ո՞ . Ազա-  
ղակեաց և Օթման — « 'ի զէ՛ն 'ի զէ՛ն »  
անդբէն յերկոցունց կողմանց բուռն զօ-  
րութեամբ բազխեցան 'ի միմեանս . մըր-  
րիկ հողալից յօդս ամբառնայր , և 'ի  
ձայն պատերազմուղաց ասել իմն որո-  
տայր ամրոցն Հարքայ :

ԳԼ. ԺԹ.

Արդ Օթման խրախոյս տայր Հագա-  
րաց և Հագարք բաշութեամբ խիզախե-  
ին 'ի պատերազմին : Անդէն բուռն զօ-

բութեամբ գրոհ տային Հայք, և խռովէր համայն բանակն. բեկանէին բունք նիզակաց 'ի բռունս քաջաց. հատանէին լարք աղեղանց 'ի թափ բազկի արի արանց, կոտորէին սուսերք թաղեալ յարիւն անհաշտ թշնամեացն, դիզանային դիակունք յասպարիզի անդ ահեղ պատերազմին. հեղեղէր անտի ապաժոյժ արիւն, և գնայր խառնէր 'ի հոսանս վարդ գեաոյն. պատերազմն յերկուց կողմանց դեռ կայր անպարտելի, Անդրէն Օթման խրախոյս կարդաց. միաբան խուժեցին զօրապետք Հագարաց Բաքիր. Հավաս և Խէլիթ հարին զճակատ գնդին Հայոց, և 'ի սուր սուսերի խողխողեցին անդ զԱրտէն, զՎաղակ և զՊարգե քաջ զօրականս Հայոց. տազնապ զօրացն Հայոց ևս քան զևս սաստկանայր, այլ քաջն Պապ ախոյեան հանդիսանայր:

Գ.Լ. Ի.

Երկինք ամբոխեն այլ սիրտք ար.

եաց ոչ խռովին, Ազազակեաց քաջն Պապ — « Հայք զի՛ կայք հեղէ՛ք զձերդարիւն որով դտիք միշտ զազատութիւն» Արին Ազատ յայն բարբառ դիմեաց 'ի դահէ անտի տապանաց, բեկեալ զթըշնամեացն բանակ եհաս առ Բաքիր և ուժգին գեհեաց զսուսերն 'ի գլուխ նորա. Բաքիր ոգեսպառ անկաւ 'ի գեաին և սուրն Ազատայ բեկաւ 'ի բռին, Արին Ազատ անցեալ անդր գեաոյն խաղաց 'ի վերայ Օթմանայ, տազնապ մահու պատեաց զՕթման, այլ դէպք անակնկալ եղեն նմին խափան, Արդ յուղղելն Ազատայ զնեան 'ի սիրան Օթմանայ. ահեղ ճայթմամբ հատաւ անդէն լարն աղեղան, և նեոն 'ի ձեռանէ Ազատայ անկաւ 'ի գեաին ունայն, Հավաս և Խէլիթ հասին աստի անտի և 'ի թիկանց թաղեցին զգեղարդս 'ի պարեխն Ազատայ, Ազատ անխռով դարձաւ անտի յասպարէզն արձակ, էջ անդ յերիվարէն, խլեաց զսլաքն 'ի վերայ անտի իւրոց էառ ախով արիւն 'ի վեր հասեալ գոչեաց

— «Արբ Հայաստան զբաժակդ աղա  
տու թեան , » ապա ուշք նորա անցին և  
անկաւ 'ի դետին , Գոչեաց անախ Պապն  
քաջ — «Ահա անկաւ Արևն Հարքայ .  
հասէք թափել զանձն Աղատայ . » Հայք  
կանխէին թափել և Հադարք բռնանա-  
լին փողոտել , ստէպ ստէպ սուսերք  
զալարէին և յերկոցունց կողմանց դե-  
ակունք արի արանց յերկիր թօթափէին ,  
սուսերք Հադարաց շողային յանձն Ա-  
ղատայ :

Գ.Լ. ԻՍ.

Պաշտպանք հայրենեաց 'ի գիրկս  
հայուհեաց . ամբոյն Հարքայ անհեղ իմն  
որոտաց , համայն աղատանիք զեղան 'ի  
վերայ պարսպաց . Զանիկ Երանայ զին-  
եալ սրով խոյանայր 'ի դրանէ բերդին  
'ի բանակն Հադարաց , դիմեալ բուռն  
եհար զվարսիցն Հալասայ , տապարեալ  
սրով զգլուխ նորին , եհար ուժդին 'ի  
դետին , և էանց հոլովեաց ոտիւք զայն  
'ի փոշին , ապա դարձաւ զ'տեղեաւն ,

բարձեալ զբիակն Աղատայ 'ի թիկունս  
ողբովք արատուաց եհար ընդ դարն :

Անդէն Օթման ցամամբ հեղեալ  
զհետ Զանիկայ գոչեաց «Ահա հրեղէն  
տանի զհողեղէն . տեսէք , տեսէք » :  
Անդէն Զանիկ զբիակն Աղատայ հան-  
դարտ հանգոյց 'ի դետին , եղեալ զսու-  
բըն 'ի բերան եկաց յընթեր դիական ,  
և բարձեալ զաղեղն Աղատայ եհատ հիւս-  
մի յիւր հերաց , սկսաւ Զանիկ կահել  
զայն լար աղեղան : Անձն Աղատայ լո-  
ղայր յարեան , հանդէպ Զանիկայ կառ-  
եաւ եկաց Օթման :

Գ.Լ. ԻԲ.

Հրեշտակք իմանէն 'ի հանդես քաջ  
արանց , բանակքն երկուքին ակնկառոյցք  
'ի նոսա հայէին Զանիկ սկսաւ երգել :

Աղատ իմ աղատ  
եղբայր հարազատ  
աղաչէ Զանիկ  
քոյր քո գեղեցիկ :

Աղատ արի կայ  
հանդէպ Հագարայ  
ահա՛ սպառնան  
գերեւ զՀայաստան :

Աղատ արի կա՛յ  
ղհիւս իմ՝ հերայ  
աղեղանդ հարմար  
կահեցի՛ ի լար :

Աղատ աչերդ բա՛ց  
յերկինս անդ հայեա՛յ  
յաղթութեան պսակ  
քեզ բերէ հրեշտակ :

Ամբողջն Հարքայ անդրէն դղրդեցաւ,  
հեծեալք երեք երևեցան ՚ի կատար դա-  
րին Սահանայ, աչք Չանիկայ արտասուօք  
յայն կողմն հարան, Չանիկ դարձեալ  
հեծածանօք սկսաւ երգել :

Աղատ արի կա՛յ  
երան երևաց, հահա՛ հա՛  
սուսեր ՚ի ձեռին  
վարել զթնամին :

Արին Աղատ սղողեալ արեամբ առ-  
ժամայն յարեաւ ՚ի տեղւոյն, և առեալ  
զաղեղն ՚ի ձեռաց Չանիկայ դիրկս եմուտ  
աղեղան : Երան ՚ի քարանդէ անտի ա-  
ղաղակեաց — « Ապաքէն օղնեաց հայոց  
տան հաց : » Անդ եկաց մահ զգլխովն  
Օթմանայ, Աղատ ՚ի թափ արձակեալ  
զնեան դոչեաց — « Ա՛ռ Օթման » : Հըն-  
չեաց ամբողջն Հարքայ — « փչեա՛ զողիդ  
՚ի դեհեան : » Հարաւ նեան Աղատայ ՚ի  
սիրտ Օթմանայ, և փողոտեալ ՚ի թափ  
էանց անդր ՚ի թիկանց : Անդէն Օթման  
ուժգին թնդմամբ հոսեցաւ ՚ի դետին :  
Անդ Չանիկ դողոր համբոյր կնքեաց ՚ի  
վեհ ճակատն Աղատայ, եմուտ ընդ թե-  
ւօք նորա, և հետի հետի եհան զնա  
յամբողջն Հարքայ :

ԳԼ ԻԳ.

Ախոյեանն ժառանդէ զասպարէզն  
քաջութեան : Անդէն որոտաց Երան սու-  
սեր ՚ի ձեռին — « Աղատք Հարքայ յաղ-

Թե՛ն Հագարայ . « հարե՛ք հարե՛ք երկունք չարեաց են կեանք Հագարաց : » Համայն զօրք Հագարաց բեկեալ 'ի փախուստ դառնային , հայք զհետ մտեալ ցմուտ արեգին 'ի սուր սուսերի հարին 'ի նոցանէ քսան և վեց հագարս արանց , և գերեցին դրօշս հարիւր և տասն : Գիշերն կանխեաց խաւար պատեաց իսպառ զերեսս երկրի , զօրքն հայոց 'ի ձայն փողոյ խմբեցան 'ի հովիտ անդ ձորոյ Սեաւ բերդին , հուր հարին 'ի շամբս եղեգանց դուլ տալ զինուց , բոց հրոյն ճարճատմամբ յօդս ամբառնայր , գազանք ամեհիք զահի հարեալ 'ի գոռ գոչիւն փախչէին զողկլ 'ի ճէղքս ապառաժ անձաւաց :

Անտառք տօսախ և թեղի անկոց հնչէին 'ի ձայն թռչնոց երգեցկաց , լուսին 'ի թիկանց սեպ լերանց ելանէր լողալ 'ի ծովն երկնից , աստեղք փայլունք շուրջ զնովաւ շողշողէին , հնչէր 'ի հարաւոյ հողմն ինչ հեղիկ , և ահա՛ բանակն հայոց շարժէր անտի յաղթանակաւ քաջութեան դառնալ 'ի հարք :

ԳԼ ԻԳ.

Արժանի են դովութեանց կեանք արի արանց . առաջին լոյսն բեկեալ պատառէր զքօղ մթութեան , զօրք հայոց շտաշմամբ զինուց համօրէն զեղան 'ի հարք : Համբաւ յաղթութեան հնչեաց յամրոյն Լիզայ , բացան անդէն երկաթի դրունք դղեկին և համայն զօրքն խաղային յակաստան բերդին : Գորովէին սիրտք հայ զօրավարաց 'ի տեսանել զԱզատ :

Պատեալ էին ինկամով վէրք Ազատայ , այլ 'ի հոսմանէ առաւ արեան կայր նա յանկողնի անդգայ :

Երան վարեաց 'ի գաւիթ իւր վանաց . իջեալ յերիվարէն դիմեաց անդէն 'ի յարկն Ազատայ . զհետ Երանայ մտին և հայ զօրավարք . վառէին 'ի տան անդ ջահք բորբոքեալ բոցով : Արեգ տիկին նստեալ 'ի սնարիցն Ազատայ հայէր յերեսս որդւոյն , և անխօս հեղոյր զարտասուս : Հապա՛ Չանիկ — ձեռն 'ի ծնօտի

կայր յանտիցն Աղատայ, և տեսեալ զհայրն իւր արտասուեալ գոչեաց — « Հայր իմ վեհազն հայր հայեայց յԱղատ. Աղատն ահա՛ կայ անըզգայ. աւա՛ղ գուցէ՛ դառն լինիցի վախճան Աղատայ անուշ եղբօրն իմոյ Աղատայ » Ահա զայս ասէր հայուհին հրեղէն և անկեալ ՚ի վերայ երեսաց արտասուօք թանայր զոսա հարազատին :

ԳԼ. ԻԵ.

Ամփոխեցան սիրաք հայ զօրավարացն յարտասուս վեղձկեալ. Երան խոր ՚ի սիրտ խոցեալ ցայն վայր ապուշ հայէր յերեսն Աղատայ, անդէն խոնարհեալ զդիակամբ որդւոյն համբոյր քաղցր կնքեալ ՚ի ճակատ նորին գոչեաց — « Ազատ արի կայ մատաղ քոյդ կենաց » Անդէն Աղատ զայս իւր երաց և առ խնդին արտասուեալ ասաց — « Հայր իմ յարև քո ապրիմ. արդե՞օք ո՛ տարաւ զյաղթանակ » Առան ասէ — « Յա-

րեն Աղատայ Հայք Հայք հզօր Հայք » դէմք Աղատայ արևեցան, փարատեցին երկունք արտասութեան և հեղան անդարտասուք խնդութեան :

Առան իշխանն Գանձայ խոնարհեալ զգլխովն Աղատայ ասէ — « Երան պարզեա՛ ինձ ձեռն հաւանութեան. ուխտեմ տալ զԶարման Աղատայ ՚ի վարձ վեհ նորին քաջութեան » Երան անդէն կալեալ զաջն Առանայ ասէ — « Ապաքէն Զարման Աղատայ թէ Զարդա երթայ . . » Հնչեաց խորանն դմբէթեայ — « Աստուած արդար լեր վկայ » Առան կրնքեաց անդ համբոյր ՚ի ճակատն Աղատայ, և Երան արտաքս ելեալ ՚ի տանէ դնաց բաղմեցաւ ՚ի դահն աւագութեան պատրաստեալն յաշտարակ Ակաստանին : Պարառեալ կացին զնովաւ զինեալ Հայ զօրավարք. պարզեցաւ դրօշն աղատութեան ՚ի դրան արևելից բերդին :

Անդ կանխեցին աղատանիք հայկազանց ՚ի ծագել արեղական, պարզեցան դափնիք քաջ արանց հիւսեալ ՚ի

թել ոսկի վարդ շուշան ծաղկանց . հե-  
զան բաժակք խնդութեան և հնչեցին  
փողք յաղթութեան (\*):

ԳԼ. ԻԶ.

Հայկազն Երան յեա պարտելայ ըզ  
թշնամին սկսանի խոհական խորհրդով  
սահմանել հայոց Հարքայ զօրէնս կրօնի  
և կենաց , զորս ազդեցին նմին ինքեան  
միտք իւր և բան : Գերագոյն էակն մի-  
այն է ճշմարիտ Աստուած արարիչ բնու-  
թեան , ապաքէն ամենայն տիեզերք 'ի  
խնամս նորին կարգեցան : Աստուած մի  
է արդարակամ և բաշխօղ ամենայն  
բարութեանց . ապաքէն զնա միայն  
պարտիմք պաշտել 'ի հոգի ճշմարտու-  
թեան : Աստուծոյ է դատել զամենայն  
մարդ 'ի դատ արդար , արտաքոյ արդար  
կրօնի չիք մարդոյ կեանք ապահով յաշ-  
խարհի . պայման մերս հոգւոյ է յեւ  
աստի միանալ ընդ Աստուծոյ . դաղանիք  
մարդկան յեա աստեաց դատին յանաչառ-

ատեանն Անեղին : Երկինք են տաճար  
փառաց Բարձրելոյն , ուր արփիանան  
աստեղք արեգակն և լուսին 'ի խնամս  
բնութեան արարչին : Աշխարհս ամենայն  
տուն է Աստուծոյ , և Աստուած պաշտի  
'ի տաճար սրտի մտաց մարդկան : Պարտիք  
մարդոյ են յաշխարհի աստ ազատ մտօք  
պաշտել զԱստուած , պաշտել զճշմար-  
տութիւն յամենայն 'ի կեանս . վարել  
առ ընկերն 'ի պայման արդարութեան :  
Ապաքէն խոհեմութիւն արանց 'ի խոր-  
հուրդս գիտութեան , այլ պարկեշտու-  
թիւն կանանց 'ի պարզ կեանս և 'ի սրտ-  
կառանս : Մնասլ օտար ազանց է անուր  
երկաթի ազգին գերանաց , ապաքէն  
բառնալ զկեանս անողոք թշնամեացն է  
ապահովութիւն անձին և ազատութիւն  
հայրենեաց :

ԳԼ. ԻԷ.

Արդ Հարք խաղաղէր 'ի հէնիցն Հա-  
գարաց , և ազատութիւն անդրէն ա-

րևէր 'ի տան Հայկայ . ոգիք հայոց  
 Հարքայ կախեալ կային 'ի միմեանց , և  
 երկին հաշտ աչօք հայէր 'ի վիճակ նո-  
 ցին կենաց : Ամենայն ոք արդար մտօք  
 տայր զանձն իւր 'ի գործ հօղոյ , և եր-  
 կիրն 'ի ժամանակին բեղմնէր զբիւր բա-  
 րիս : Գութանն գոռօղ ճռնչէր 'ի հերկ  
 ու յեղ դոյր դաշտաց 'ի խոր բացեալ  
 զակօսն ոսկեծին , պարարէին դաշտք և  
 հովիտք առատ պաղովք ցորենոյ գինւոյ  
 և ձիթոյ : Գերանային անդէն բլուրք և  
 դարձք դարից փափկութեամբ դալար  
 խոտոց : Բառաչք տաւարաց և պարա-  
 րակ հօտից խաշանց թնդէին զլերինս և  
 զբլուրս 'ի հիմանց : Բղխէին սառն աղ-  
 բերք ջուր առատ և պարզ իբր զցօղ  
 արտասուաց : Արծաթի գետակք և առուք  
 աստի անտի խաղային 'ի խոր ձորոց 'ի  
 խոխոչ ձայնից սուր սահանաց : Անտառք  
 բարեգեղ անկոյն յամենայն կողմանց  
 հնչէին իբր զքնար հողեհալ 'ի ձայն պա-  
 րուց մեղուաց 'ի պարզ օդն պարս առե-  
 լոց : Ամենայն սեպ լերինք Հարքայ շուր-

ջանակի պճնէին 'ի զարդ բնութեան գե-  
 ղովք զանաղան ծաղկանց : Երկին ծովա-  
 նայր գնովաւ 'ի կապոյտ կերպարան դի-  
 մաց , և արեգակն 'ի բարձանց արփիա-  
 նայր 'ի պարզ ճառագայթ իւր երեսաց  
 վողփողեալ 'ի կամարն երկնից : Ահա՛  
 այսօրիք էին փառք բնութեան աշխար-  
 հին Հայկայ :

Գ.Լ. Ի.Ը.

Դ.Ա.Բ.Զ.

Գ.Ե.Բ.Ա.Յ.Ն Հ.Ա.Յ.Կ.Ա.Զ.Ա.Ն.Յ

Արկածք անակնկալ դիպաց խա-  
 փանեն զխորհուրդ վեհ արանց : Հարք  
 խողաղէր յարչաւանացն Հագարաց . ան-  
 ցանէին ժամանակք խռովութեան և  
 փոխանակէին տուրք սիրոյ և խնդու-  
 թեան : Երան իշխան զբաղեալ էր 'ի հարկ  
 հարստանեացն Աղատայ . հասանէր անդէն  
 առ Երան այր մի վշտահար 'ի կտաւ կա-  
 պոյտ ամփոփեալ զիմն ծրար դնէր առա-

ջի նորա և ասէր — « Վեհազն իշխան 'ի գերեացն Հայկազանց եմ, յաշխարհէն Ասորուոց դամ աւասիկ. Սիրամ տիկին սպանելոյն Արաստայ անսեալ զվիճակ աղէտից տարագիր Հայկազանց, առեալ զհիւսս հերացն զհասեալան 'ի Հագարաց ամիրտիեաց 'ի գտակն իւր և 'ի գողնոց առաքեաց առ քեզ ինև ասել»:

**ԲՈՂՈՔ ՍԻՐԱՄԱՅ**

« Հայկա՛ղն Երան արդ աղաչէ այրի  
 « տիկին Սիրամ գերեալն 'ի Սորդան,  
 « բա՛րձ զդտակն իմ, գե՛ր 'ի գլուխդ,  
 « զգողնոցն իմ կապեա՛ զլանջօքդ, և  
 « զհիւսս հերացն իմոց կախեա՛ զըրմոց  
 « պալատանդ 'ի նախատինս աշխարհիդ  
 « հայոց: Հայկա՛ղն Երան երբ զուար-  
 « թանաս 'ի գինին Հոսանաց, յիշեա՛ ըզ  
 « դիակն Արաստ իշխանին անթաղ ար-  
 « կեալ առաջի արեգական 'ի դիրս տա-  
 « պանացն Արտաղայ, յիշեա՛ և զՍիրամ  
 « տիկին աւա՛ղ դժբախդ որդւոյլ իւրոյլ

« և թշուառ գերեօքն հայոց փակեալ  
 « 'ի կապանս բանտից Հագարաց 'ի գաշ-  
 « տըն Զարգայ: » Երան բացեալ զծրարն  
 ետես զոսկեփայլ հիւսս հերացն Սիրա-  
 մայ արամսուեաց անբաւ, և զկարգ  
 հարսանեացն Աղատայ առ ժամայն խա-  
 փանեաց:

**ԳՎ. ԻԹ.**

Աղէսք վշտագին կենաց զհետ եր-  
 թան անողոգ գերութեան. գերին Հայ-  
 կազանց տակաւին տառապէր 'ի հալա-  
 ծանս Հագարաց յաշխարհին Ասորուոց  
 'ի դաշտին Զարգայ: Գահիր որդին Սա-  
 յիտայ իշխանին Հագարաց հարեալ 'ի  
 ոէր Ագինայ դստերն Սիրամայ Հայկազն  
 տիկնոջ հալէր յանձին: Սայիտ բազմիցս  
 ստիպէր զհայ տիկին տալ զդուստրն  
 որդւոյ իւրոյ 'ի կնութիւն, այլ ո՛չ կա-  
 բէր խախտել զնա 'ի հաւատոց անտի և  
 ածել 'ի հաւանութիւն: Սայիտ զայրաց-  
 եալ կամէր սրախողխող առնել զտիկին

և զգուստր նորին համայն գերեօքն  
 Հայկազանց . այլ Գահիր զլխովին գերե-  
 եալ 'ի սէր դստերն Սիրամայ արգելոյր  
 զհայրն անագորոյն 'ի խորհրդոցն ամբ-  
 բարչտութեան . բայց Հագարք յաւե-  
 լուին 'ի ձաղանս և 'ի բանաս տառապել  
 զհայս :

ԳԼ. Լ.

Բռնութիւնն ո՛չ բեղմնէ զսէր անա-  
 րատ . Գահիր յետ բաղբամ և ունայն  
 տղնութեանց խորհեցաւ 'ի դաւանս փոր-  
 ձեւ զիւր տարփանացն բաղդ . Պանծա-  
 լին Զինէ քոյրն Գահիրայ ելեալ երբեմն  
 ազատազն դստերօքն Հագարաց կանխէր  
 առ տիկին Սիրամ հարցանել զվիճակ  
 կենացն , յաւակցէր թշուառութեան նո-  
 րին , և պատրանօք խոստանայր հնարել  
 զարձակուրդ գերեացն Հայկազանց . Ան-  
 դէն յաջողէր Զինէ 'ի հրապոյր գողա-  
 նալ զսիրտն Սիրամայ' և առեալ ըզ-  
 գուստր նորին Ագին ելանէ յեղերս Դըզ-

լաթ դետոյն 'ի զբօսանս , հասանն հու-  
 րիք Հագարաց և Հայկազանց 'ի տեղի  
 ուրեք առանձին , ստիպեալ 'ի հրաման  
 Զինեայ մերկանան ամենեքին և մտանն  
 'ի դետ անդ լողանալ : Այլք դետոյն ծը-  
 փային , և հուրիքն 'ի հոսանս հրաշանա-  
 յին :

ԳԼ. ԼԱ.

Բաղձանք անագորոյն անդէն փո-  
 խին 'ի գաղանութիւն . ապաքէն հուրի-  
 քն Հագարաց և Հայկազանց տակաւին  
 անխռով հրաշանային 'ի հոսանս ջուրց  
 Դըլաթ դետոյն . Գահիր յանկարծ իմն  
 հասեալ անդէն նստէր 'ի վերայ հան-  
 դերձիցն Ագինայ , անպատկառ դստերք  
 Հագարաց 'ի ծիծաղ անզգամութեան  
 հարեալ առ ժամայն արտաքս զեղան 'ի  
 դետոյն , և անձնիւր զգեցեալ զիւր  
 հանդերձ մեկնեցան անտի . այլ պար-  
 կեշտ դստերքն Հայկազանց ափշեալ 'ի  
 սուր հոսանս ջուրցն արտասուէին 'ի խը-

ուովանայ, հուսկ ապա հարկեցան 'ի սաստ սպառնալեացն Զինեայ ընկերք Ադինայ եւ ելանել 'ի գետոյն, և առհնապաւ զգեցեալ զհանդերձս ստիպեցան անտի մեկնիլ և նորա. Գահիր և Ադին կացին անդանօր առանձին:

ԳԼ. ԼԲ.

Ամօթանք չազդեն անզգամաց. արեզակն ամպովք տրտմութեան զերեսս իւր ծածկեաց առ անզգամութեան Գահիրայ, Ադին ամիսօրեցաւ 'ի խորս գետոյն. Գահիր զառանցեաց առ տարփանս սիրոյն — Ադին արտաքս ե'լ արարից ըզքեզ տիկին Հագարաց, — Ադին — յովազք ամեհիք լիցին տիկին Հագարացդ: — Գահիր — Ադին կամի'ս արեամբ թաղիլ 'ի գերեզման: — Ադին — Հայուհիք դիտեն պահել զոլատիւ անձին և 'ի գեհեան, — Գահիր — Ադին զիա'րդ գիտիցեն զպատիւ անձին, որք ոչ ճանաչեն զԱստուած: — Ադին — Հայք դիտեն ըզ

պատիւ անձին ուսեալ 'ի բարոյից բնութեան, և 'ի պարզ միտս ճանաչեն զմի միայն Աստուած արդար: — Գահիր — հա' հա' ո'ւր է արդարն այն Աստուած, ո'ն աղատեսցէ զքեզ 'ի փորձանոց:

ԳԼ. ԼԳ.

Ադեղունք առաքինեաց թօթափեսցին 'ի թիկունս ամբարշտաց. հոսանք Գդլաթ գետոյն ողողեալ զոսկեզեղ հսպնպիս հերայն Ադինայ գալարէին, 'ի ցրաագին հողմոյն դողայր բնութիւն Ադինայ. զերեսս գետոյն պողէին ցօղք աղի արտասուաց նորա: Ադին հայեցեալ յերկինս աղաղակեաց — «Աւա'ղ անըզգամն ասէ չիք Աստուած, հեղձանիմ աւասիկ 'ի հոսանս գետոյն, անագորոյն Գահիր դբև շողայցէ սուսերն Ազատայ: Անդէն որոտաց 'ի ճայթիւն ասեղ լար աներևոյթ իմն աղեղան: Գահիր ընդոստ թռեաւ 'ի ակղոյն, զգետնի հարեալ ուժդին դուաց — «Աւա'ղ մեռայ:»

Աղին սոսկաց 'ի սարսափ : Անդանօր ելանէր 'ի մացառաց անտի դեռեղերն պատանի հրադէմ 'ի կերպարանս որսորդի ծպակալ . յոտից ցղլուխ զգեցեալ հանդերձ սպիտակ , սուսեր սուր 'ի ձեռին հասեալ 'ի վերայ Գահիրայ կորզեաց զնեան 'ի սրահ նորա , կալաւ զվարսիցն անդամ անդամ յօշեալ սուսերաւ զգի նորին ամայր 'ի գեան և ասէր — « Աղին ե՛լ զգեցիր զհանդերձս քո , կանխեա՛ ասել Սիրամայ » , Ազատն ասէ — « Այսօր յեւաննն յատեղաց եղիցին փրկանք գերեացն Հայկազանց : » Ապա մեկնեալ անտի Ազատայ եհար ընդ սարն :

Աղին սթափեալ 'ի խռովանաց ազդակեաց — « Սոսկալի՛ վիճակ ա՛հ ա՛հ դա՛ էր Ազատն , դա՛ էր Ազատն : » և յարաստուս փղձկեալ անթարթ աչօք հայէր զհեա Ազատայ , և հալէր հողի նորա :

ԳԼ. ԼԳ.

Աւետիք աղատութեան փարատեն զվիշտս արտմութեան : Աղին ելեալ 'ի գետոյն զգենոյր զհանդերձս իւր . 'ի խինդ և 'ի սաղնապ հասեալ 'ի տուն հարեալ յոյբ և 'ի լաց պատմէր Սիրամայ զաղէտալի անցս իւր կենաց՝ զործամբարշտութեան Գահիրայ՝ և զտնակրկալ մահ նորին 'ի ձեռն հայկազն Ազատայ : Սիրամ 'ի լսելն զանուն Ազատայ աղաղակեաց — « Աւա՛ղ Աղին , Ազատ աղաաիչն հայրենեաց Ազատ , հի՛մ թողեր զնա , հի՛մ հատար 'ի հետոց նորա , արդեօք իցէ՞ թէ տեսից զնա . սիրա իմ փոխեալ է ծով արեան , և աչք իմ եղեն աղբերք արտասուաց : » և ուշք Սիրամայ անցեալ անկանէր անդէն 'ի գետին : Աղին զըջանայր զիւր ասացն , ապա 'ի միտս եկեալ սկսանէր շփել ըզսիրան Սիրամայ և ասել — « Մա՛յր իմ աւետի՛ք քեզ , արի՛ կաց , Ազատ 'ի գընալն ինձ ասաց — « Աղին կանխեա՛ ա-

սել Սիրամայ Ազատն ասէ «Այսօր յեւ-  
 նեւն աստեղաց եղիցի ազատութիւն  
 գերեացդ Հայկազանց,» Սիրամ հոգի  
 առեալ անդէն յոտն եկաց և զանխուլ  
 պատուիրեաց Հայկազանց պատրաստ  
 կալ 'ի գաղթել յերս անդ աստեղաց :

ԳԼ. ԼԵ.

Անսայ խրատու հօր որդի առաքինի.  
 Ազատ հրամանաւ Երանայ երեք հարիւր  
 զինեալ զօրօք Հայոց հասեալ յայլսար-  
 հըն Ասորւոց տաւաղէր յանտառին  
 Զաբդայ . Թամիր իչխանն Արևորդեաց  
 չորեք հարիւր հեծելովք հասեալ յօդ-  
 նութիւն Ազատայ սպասէր միայն հրա-  
 մանի նորին . Ազատ փոխեալ 'ի կերպա-  
 րանս որոորդի իջանէր յեղր Բգլաթ  
 գետոյն 'ի հարձու փորձ կենացն Հայկա-  
 զանց , և տեսեալ զեղեռն անօրէնու-  
 թեան Գահիրայ 'ի սուր արդարութեան  
 մկրտեաց զամբարշտութիւն նորա , և  
 անդրէն դարձեալ յանտառն սպասէր  
 մտից արեգական : «Ամբարիշտն ինդայ

'ի չարիս » . Զինէ պարծէր 'ի դաւանս  
 փակել զհրեղէն Սգլին 'ի գիրկն Գահի-  
 րայ , Սայիտ գոհանայր անխիղճ մտօք  
 զանիրաւ երախտեացն Զինեայ , այլ Սի-  
 րամ տիկին և դերին Հայկազանց ան-  
 համբեր սրտիւ սպասէր ելիցն աստեղաց :

ԳԼ. ԼԶ.

Ամբարիշտք կործանին 'ի տարա-  
 ժամու . Արեգակն մտանէր 'ի խորան  
 հանդտեան . Երեք իշխան գեղերոյն  
 պարզէր զքօղ խաւարային մթութեան  
 ընդ ամենայն երեսս երկրի , բորբօքէին  
 ջահք վառեալք 'ի յանիրաւ դանձուց  
 բարձրացեալ պալատս Հագարաց առ  
 եղերք Բգլաթ գետոյն , կաճառք աս-  
 տեղաց խաղային 'ի կամարն պարզ երկ-  
 նից տեսանել զհանդէս քաջութեան  
 Հայկազանց և զօր կորստեան ամբարը-  
 տաց , հնչեցան յանակնկալս տոփիւնք  
 ոտիցն երիվարաց . հասին անդէն ար-  
 հաւիրք չարութեան 'ի վերայ Այլազ-  
 դեաց , գերին Հայոց առ ժամայն ամ-

փոփեալ դաղթեաց, և սուրն Հայկազանց անինայ 'ի Հագարս խաղաց. յաղաղակ անողորմիցն աշխարհ թնդայր, այլ բարձեալ էր յոյս փրկութեան, լուութիւն տակաւ առ տակաւ տիրեաց, պտոյտք Իգլաթ գետոյն լցան դիակամբք Հագարաց, և ջուր գետոյն փոխէր զԸԼ խովին յարիւն: Գիշերն ընգմիջեաց, արին Աղատ զօրօք իւրովք ելեալ 'ի Չարդայ վարեաց զհեա հայ գաղթականաց, և յեա հինգ առուրց հասեալ 'ի լեւրինս Արեաց՝ Թամիր իշխանն Արևորդեաց գոհութեամբ սրտի մեկնեալ յԱղատայ դարձաւ յաշխարհ իւր:

ԳԼ ԼԵ

Վայելք աղատութեան փարատեն զվիշտս տրտմութեան: Գաղթականք Հայկազանց ողջամբ հասանեն 'ի Հարք. պատուով պաշտին 'ի Հայկազն Աղատաց: Երան անդէն սկսանի բոլորել զկարգ հարսանեաց. Աղատ պսակի ընդ Չարմանայ. Չանիկ դուստրն Երանայ ընդ

Ապահայ որդւոյ Պապայ իշխանին Գանձայ. Ագին դուստրն Սիրամ տիկնոջ ընդ Չարեհայ որդւոյ Առանայ իշխանին Ապահունեաց: Խմբի հանդէս հարսանեացն ուրախութեան, երկինք սէր տեղան 'ի Լիզ Աւան, 'ի հողի և յԱւետարան օրհնին շառաւիղք տոհմին Հայկազն Երանեանց 'ի փառս Հայկազանց և 'ի պարծանս հայրենեաց:

ԵՐԳԵՆ ԳՈՒՍԱՆԻՔ ՀՍԹԿՍՉԱՆՑ

Այն ճամբուկ որ դու կ'երթաս, քար քաղած, աւաղն է մաղած	Այն գետիկ որ դու կ'անցնիս, գետ գինի, կամուրջն ապակի
Այն նաւիկ որ դու վարես նաւն եղէգի կողերն է ոսկի	Այն արև որ դու կ'ապրիս արևն 'ի ծով կ'թաղի ամպով
Այն ծովիկ որ դու հալիս ծովը ծփի հրեղէն պատանի	Այն քաղքիկ որ դու կ'իջնաս գահ բաղմին արևն ու լուսին
Գո՛ւս Արեգակն ակն 'ի յերկին տեսէք այն ո՛վ է	

Պարս արեգակն ակն 'ի յերկին  
մեր թագաւորն է

Գրու Այն լուսին աւագ լուսին  
տեսէ՛ք այն ո՞վ է :

Պարս այն լուսին աւագ լուսին  
մեր թագուհին է :

Գ. Լ. Լ. Ը.

Արարք Հայկազանց սխրանան 'ի  
հանդէս դիւցազանց : Երան գերազան-  
ցեալ հայրենասիրութեան ոգւով՝ ան-  
պարտելի քաջութեամբ՝ անմահ երախ-  
տեօք՝ և վսեմագոյն խոհականութեամբ՝  
հասեալ 'ի բարեոք ծերութեան վախ-  
ճանի 'ի գիրկն որդւոյ իւրոյ Ազատայ ,  
659 ամի տեառն 'ի տան իւրում 'ի  
Հարք 'ի Լիզ Աւան (1) և թաղի մարմին  
նորին 'ի Սուրբ Երրորդութիւն եկեղեց-  
ւոյ բերդեան 'ի մատրան ձախակումեան  
դասուն՝ թողլով իւր որդի և ժառանգ  
զհանձարեղն և զհայրենասէրն Ազատ :  
Երան 'ի ժամ օրհասին զայս վսեմ ա-  
ռածն ասաց Ազատայ : — « Ազատ որդ-  
եակ 'ի մի՛տ առ թէ ո՞րքան գերագոյն է  
գո՞ն Աստուած արդարութեան, այնքան  
գերազանց է լինի՞ն խոհեմ և առաքինի  
իշխան ժողովրդեան :

(1) Հայկանդ

(\*) Ազատ որեարք Արամեան  
ազատութեան առժամայն

զյաղթանակ կանգնեցիք  
արեամբ փրկել զՀայաստան :

Հարկիք վայրագ բռնութեան  
օրէնք կենաց չեն մարդկան ,  
պարտիք արդար իրաւանց  
մերժեն զպայման գերութեան :

Համեստ հանճարն ազատէ ,  
ահեղ սուսերն ունայն է ,  
հոսանք արեան ուր խաղան  
սղատութիւն անդ փայլէ :

Անմահ հողիք հայ քաջաց  
հային 'ի հանդէս յայս փառաց ,  
հիւսել պսակ ոսկեղէն  
յարև արեացիք Արամեանց :

Անմահ աւիշք ձեր արեանց  
ցօղեալ 'ի հող հայրենեաց  
բեղմնեն յապայս հորամոյն  
քաջ պարմանիս Հայկազանց :

ԲԱՐՁՐ ԲԱՐԵՐԱՐԲ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԶՆ ԵՐԱՆԱՅ



ՊԱՏՈՒԵԼԻ ԵՂԻԱ Տ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

( Հ-Գ-Բ-Ե-Ղ-Պ-Յ )

Մ. Յակոբ	էֆէնտի	Ունճեան	2	Մէճ.
Ռուբէն	»	Մնակեան	1	»
Յովհաննէս	»	Նաղըճեան	1	»
Աթանիք	»	Ռափայէլե.	1	»
Ռափայէլ	»	Յ. Քլնտէրե.	1	»
Մ. Մատթէոս	»	Քըլըճճեան	1	»
Մ. Գրիգոր	»	Ունճեան	1	»
Տիկին Մողոսեան			1	»
Գէորգ	էֆէնտի	Քատըեան	1	»
Մ. Երևում	»	Երէցեան	1	»
Խաչիկ	»	Խուրտաճեան	1	»
Յարութիւն	»	Նշան	1	»
Կարապետ	»	Կեսարացի	1	»
Համբարձում	»	Կեսարացի	1 <sup>1</sup> / <sub>4</sub>	»
Համբարձում	»	Համամճեան	<sup>1</sup> / <sub>2</sub>	»
Լիմոնճեան	»	Ընտանիք	<sup>1</sup> / <sub>2</sub>	»

Պարտուց պայմանաւ  
գոհութիւն անբաւ  
փոխան երախտեաց  
վեհ մեկենասաց :

6116

2013

2013

